Արիստակէս վրդ. Տարօնեցի «որ էր կաստարեալ գիտող երաժշտական երգոց եւ եղանակաց», Յովսէփ և Յովհաննէս վարդապետք Հղուեցի, Յովհաննէս վրդ. Քաջբերունեոյ «այսինքն յԱրմիշոյ»։

Իսկ մասամբ Սրապիոնի և մասամբ Գրիգոր Կեսարացիի աշակերտեցաւ Մովսէս Սիւնեցի «որ եղեւ լուսաւորիչ արեւելեայ մասին յաշխարհիս եւ նորոգող Ս. Էջմիածնի»։

Գրիգոր Կեսարացի իբր ուսումնատենչ պատանի պէտք է կանուխէն դիմած ըլլայ Սրապիոնի քով որ իբր «տիեզերալոյս եւ խաղաղասիրաց ճգնաւոր» և «անյաղթ փիլիսոփայ» (Յակոբ քհնյ. Կեսարացի), անշուշտ մեծ տպաւորութիւն թողած է իր աշակերտներուն վրայ։

Դարանաղցի, որ հակառակորդ մը եղած է Գրիգորի, խօսելով Սրապիոնի վրայ կ'ըսէ թէ «եղեւ աշակերտ սորին, նախ-

---

լէպին Ուռհայեցին կ'անուանէ նաեւ «հոռեսոր»։ Ասկէ կը հասկցուի թէ Յովհաննէս ալ իր կարգին աշակերտներ հասուցած է։

Իրեն համար Հ. Ներսէս վրդ. Ակինեան կ'ըսէ թէ բարեկամական յարաբերութեան մէջ էր Հռոմի հետ (ՀԱ. 1934, էջ 237)։ Իսկ անոր տրուած Տիգրանակերտի արքեպիսկոպոս տիտղոսը սխալ մըն է կարծեմ (նոյն) վասնզի անիկա իր ծննդավայրին եպիսկոպոսն էր։